

զամեններն կը թուլանան, հիւանդն ինքն իրեն վրայ կը ձռնի, աթոռներ կը սահի, և անկենդան նիւթոյ պէս կ'իյնայ յատակի վրայ՝ »:

Եթէ՝ սաստիկ և յանկարծական ըլլայ զգայարանաց գրգռումը և եթէ՝ անընդհատ և մեղմ, ջղային քունն յառաջ կու գայ, զոր օրինակ, յանկարծական սաստիկ ձայն եւ բաժտական գործւոյ մը անմիջապէս ուղղագարութեան մէջ կը ձգէ հիւանդը¹։ Պոռտնըլի և Ռենեսարի հիւանդին պատմութիւնը ծանօթ է։ Սա ծնծղայ մը կը զարնէր. և ահա յանկարծ ձեռքէն կը սահի կ'իյնայ, և ինքն ալ անզգայ կ'ըլլայ։ Իսկ վերոյիշեալ բժիշկներն անոր ձայնը և կը գտնեն անշարժ և քնոյ մէջ։ — Ծանօթ է և զուարճալի ուրիշ հիւանդի մը դէպքն ալ. Salpêtrière հիւանդանոցին մէջ կը կասկածուէր՝ որ այդ հիւանդը Ռիշէրի քիմիատոնէն լուսանկարներ կը գողնար. իսկ նա զայրացմամբ կը պաշտպանէր ինքզինքը։ Առաւօտ մը բժիշկը կու գայ ուրիշ հիւանդաց վրայ փորձեր ընելու, և կը տեսնէ զողին ձեռքը լուսանկարներուն զարանին մէջ. կը մօտենայ, իսկ հիւանդը անշարժ կը կենայ։ Կը քննէ և կ'իմանայ՝ որ մերձաւոր սրահին մէջ ծնծղայի ձայնէն ազդուելով անզգայութեան մէջ ինկեր է՝ մինչեւ զողութիւն կ'ընէր։

Այդ փորձերն ու օրինակներն կը հաստատեն՝ թէ աւելաց և ականջաց ձեռքով կաշիքի է մագնիսական քուն առաջ բերել, պիտի տեսնենք որ շօշափելեօք ևս հաւատարապէս կրնանք մագնիսացընել։

Մօրթի թեթիւ և յաճախակի գրգռումն՝ կրնայ ըլլալ պարզապէս բերելով մօրթը, աչքին գնդակները մեղմով ճգնելով կամ ականջաց վրան սեղմելով, ելեկտրական փոքրիկ հոսանք մ'անցընելով, մագնիս գործածելով։ Եւ եթէ մօրթը գրգռուի, շատ անձնաց վրայ մագնիսական քուն կու գայ։

Տը Ժօն կը պատմէ՝ որ շատ անգամ և շատ միջոցներով փորձեր է քնացընել մարդ մը, բայց ամենեկին չէ յաջողած. սակայն զանկին որոշեալ կէտ մը շփելով՝ մի քանի վայրկեան ետքը անզգայացըն է³։ Նոյն բժիշկը թերեւս այս մարդուն վրայ հանդիպեր է քնածին գօտի բոսուածին։ — Եւ ոմանց այս առանձնայատկութիւնը կը յորպորէ զմեզ խօսելու նոր գիւտի, կամ լաւ եւ, նոր յոյժ հետաքրքրական զրուծեան վրայ՝ զոր վերոյիշեալ քնածին գօտիք կոչուածի մասին հաստատեցին ոմանք ի գիտնոց։

Շարքոյ, Ռիշէր և Տիսմոնփայլէն այդ տեսակ գօտիները արդէն իսկ նշանակած էին. բայց Փիլլըր առանձին ինամբող և զրուծեամբ ուսումնասիրեց այս կարևոր խնդիրը՝ իրեն *L'hystérie et l'hypnotisme* երկասիրութեան մէջ, ուսկից բաղելով պիտի բացատրենք այս նոր զրուծիւնը՝ հեղինակին տուած բացատրութիւնէն կարևոր հետեանքներ հանելով։

Հ. Ս. ՍԱՐԵԱՆ

Շարայարելի

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

1. Միջին ընթացք իմաստասիրութեան. — Աշխատասիրեաց Հ. Եղուարդ վ. Սիրունեան ի Միխիթարեան Ուիտէ. — Վիեննայի, 1899. զին. 2։

Իմաստասիրութիւնն՝ հանդիսարան է մարդկային մտաց կրած յեղափոխութեանց և անոր բազմազան գաղափարաց, որոց եթէ՝ գեղեցիկ և եթէ՝ տգեղ պատկերները ի հանդէս հաներ է սոյն Միչիքն ընթացքս։

1. *Leçons cliniques sur l'hystérie et l'hypnotisme*. Կ. Ք. էջ 88։

2. Charcot. *վերոյիշեալ մատենն*. էջ 304։

3. *Compte rendu du premier Congrès de l'hypnotisme*. Paris, 1890. էջ 192։

Այս, ինչպէս կը կարգանք ի յառաջաբանի մատենիս, ազգիս մէջ մերթ ընդ մերթ լոյս տեսեր են մի քանի իմաստասիրական գրքեր, որք կամ լծարգմանութիւնք են և կամ լծարգ մանաբար յօրինուածք. և լծպէտ ասոնք ամէնքն ալ իրենց զարուն կամ ժամանա- կին զաղափարաց ներկայացուցիչք եղած են՝ մեծապէս ստատարելով իմաստասիրութեան հետամուտ անձանց, սակայն այժմեան զա- ղափարաց զարգացման չեն կրնար համա- պատասխան ծառայութիւն ընել: Եւ այդ իսկ է պատճառն՝ որով Եւրոպայի մէջ իմաստա- սիրական դասագիրք և մատենաք անպատ- ըտուց նման անընդհատ իրարու կը յաջոր- դեն, և այդքան զրոց անթիւ շարքին մէջ հագիւ մի քանին ընդունելութեան արժանի դատուած են: Իսկ ներկայ մատենին հեղի- նակն գիտցեր է ճարտարութեամբ հետեւի այս առաջնակարգ դատուած գրոց Եւրոպայի. և իբրաի յաջորդեր է զանոնք պուցցանել իրարու մէջ՝ գեղեցիկ միութիւն մը կազմե- լով, ուսանողաց մտաց դիւրըմբռնելի դա- սակարգութեամբ, յաւելլով իւր կողմանէ ինչ ինչ կարեօր մասեր: Այսու կրցեր է նա, ըստ իւր իսկ փափաքանաց, օգտակար ըլ- լալ եթէ՝ մանկական հասակի և եթէ՝ երի- տասարդ տիոց, և նոյն իսկ բարձրագոյնից՝ որք իմաստասիրականին մէջ ի խոնարհս կը շրջին:

Միեւն ընթացքիս չորրորդ էջին մէջ լաւ զաղափարուած Եւրագիրն՝ ուսանողին մտաց մէջ կը ներկայացունէ բովանդակ իմաստա- սիրութիւնը. իսկ վերջոյ դրուած Գանկն յայտնի կը ցուցնէ՝ որ ըստ կարելոյն ա- մէն իմաստասիրական խնդիրք մատենին մէջ տեղ մը զբաւեր են: Իսկ Հին և նոր իմաս- տասիրաց, կամ լաւ և իմաստասկաց բժա- խնդիր և երբեմն իրենց իսկ անխմանալի խնդիրներով չէ ուզած հեղինակն զբաղեցը- նել ի զուր և ծանրաբեռնել ուսանողաց միտքը: Նա մտեր է յասպարէզ իմաստա- սիրութեան ըստ արդի գիտութեան բացա- տրելով ընդարձակ և պայծառ կերպով Մար- դուս ժագոմբ, Տարփիականոքաբանք, Մագ- նիականոքաբանք, Մագնիսական քոռնը, Պայծառ տեսութիւնք, և այլն. — չէ մշտուած

սոսկ եկարդարեանց հոսանքն, որոնք ներ- կայ դարուս անուշիղ իմաստասիրաց ընդու- նայն վանքով իրեւ ապացուցեալ դրոքիւնք՝ մեծ գեր իւր խաղան տղէտ և միամիտ խմբին մէջ: Հեղինակը՝ այս եկարդարեանց վրայ խօսելու ժամանակ համարձակ ի մէջ կը բերէ հակառակորդաց փաստերը և զանոնք ուղղակի կամ անուշիղակի կը հերքէ. չի նմանիր ոմանց՝ որք փախուտ տալով ճշ- մարտութեան արձակած սլաքներէն երկու երեք անխնայ բառեր կը նետեն և անոնց վրայէն սահելով կ'անցնին, և չեն համար- ձակիր ճշմարտութեան փաստերը մէջ բերել և հերքել տրամաբանական օրինաւոր կա- նոնաց համեմատ. — և ահա այսու իսկ ճշմարտութիւնն լոնլիայն յաղթական կը հանդիսանայ բանիբուն անձանց առջև:

Մատենիս յառաջաբանին մէջ համառոտ պատմական ծրարքի մը կայ, որով ուսա- նողք կրնան իմանալ թէ՛ այս ինչ գրութիւնն կամ կարծիք որ շրջանին կը վերաբերի:

Միով բանիւ, մատենին թէպէտ և չունե- նայ ամէն պահանջուած առաւելութիւնները, վասն զի Միւլին ընթացք մ'է, այսու հան- դերձ ազգիս մէջ ամենէն ընտրեալագոյնն է և յարմարագոյն դարուս, և ունենալով բազ- մադիմի առաւելութիւններ քան զայլս և իւր գնով ալ դիւրամատչելի ըլլալով՝ վստահ ենք որ օգտակար պիտի ըլլայ ուսանողաց և նպատամատոյց դաստառաց, և ըստ աշ- խատասիրողին ըզձից, երիտասարդ ծաղիկ հասակն այսու՝ իմաստասիրական ուղիղ սկզբունքներով պիտի աճի, զարգանայ և ուժանայ:

Հ. Ս. ՍԱՐԵԱՆ

2. Գիւղաւանտեսական գործիքներ եւ մե- ընմանք. Հեղինակ՝ Լեւոն Խան-Ալեան:

Տպագրեալ ի Տփլիսի Մարտիրոսեանցի տպարան 1898ին, Թիֆլիսի Հայոց հրա- տարակչական ընկերութեան նպաստիւ: Գինն է 50 կոպէկ. — 250 էջերէ կազմուած է՝ որոնց 200ն՝ գրքին էական մասը կը ներկայացնեն, ունի նաև համառոտ բառադիրք մը և մնացած էջերը՝ նիւթոց ցանկ և գիւ- ղատնոսանական մեքենավաճառներու հասցէ- ները կը գրաւեն:

Գրեխ վարկը դեռ աւելի կը բարձրացընեն՝ բովանդակած 250—ի չափ մաքուր և ընտիր փորագրեալ՝ մեքենայից պատկերներն, որոնցմէ մի քանին Լ. Խան—Աղեան ստորագրութիւնը կը կրեն։ Ուրեմն յարգոյ մեքենագէտը՝ է նաև ընտիր փորագրող։ Հարեանցի գրախօսական ունիարի մը տանը՝ զիւղատնտեսից և կալուածատնտեսաց այս անհրաժեշտ կարևոր և օգտակար գրքին բովանդակած նիւթոց վրայ, որ ռուսահայ լեզուով գրուած է։

Հեղինակը իւր յառաջաբանին մէջ կը գրէ «Պիշաղատնոստաքեան մէջ մեքենան մեծ դեր է խաղում, քերականութեամբ մարդոս աշխատանքը և քարճարացնելով արդիւնքը»։ Ամենաճշմարիտ վերնագրով կը սկսի և կը պարզէ ընթերցողաց առջև թէ՛ ինչն մեր երկրագործները շատ կ'աշխատան և քիչ արդիւնք կը քաղեն, որովհետև Քրիստոս սէ առաջուան զրոյթեան համեմատ կ'աշխատին և կը սերմանեն, մինչդեռ Հիմայ քաղաքականացեալ ազգաց մէջ մշակութիւնը զարգացած է՝ շնորհիւ նորանոր մեքենաներու և ուրիշ միջոցներու։ Ապա կը բացատրէ թէ գործիքները ինչ օգուտներ ունին և իւր հեղինակութեան նպատակը ինչ է՝ որ առանձին կերպով հայ գիւղացիներու և հայ հողատնարց կը նուրբ՝ գիտուն պարոնը։ — Յիբաւի ընտիր և օգտակար նուրբ՝ այնպիսի ազգի մը, որ ներկայիս մէջ, ամէն բանէ աւելի օրապահիկ հացին և գիտութեան կարօտ է։

Պ. Լևոն իւր յառաջաբանը կը վերջացնէ ըսելով թէ «Այս աշխատութիւնը բազկացած կը լինի չորս մասերից։ Ա. հերկող գործիքներ։ Բ. ցանոց, հնձող, կատող և մաքրող մեքենաներ։ Գ. յաւելուածք, և Դ. բացատրական բառարան՝ հայերէնից — հայերէն — ռուսերէն — զաղղիերէն»։

Յառաջաբանին կը յաջորդէ նախագիտելիք մը՝ յորում կը յայտնէ թէ գիւղատնտեսական գործիքները և մեքենաները պարզ և ամուր մարմիններէ կազմուած պէտք են ըլլալ՝ ինչպէս երկաթէ, պողպատէ, և այլն։ Կ'ուսուցանէ թէ՛ ինչպէս պէտք է գործածել մեքենան և խնամել կամ նորոգել՝ երբ հարկը

պահանջէ։ Կը պատճառաբանէ թէ միեւնոսերով ցանել, հնձել և այլ գործեր տեսնելը շատ աւելի արդիւնաւոր կ'ըլլան և քիչ ժամանակ կը պահանջեն՝ քան թէ առանց մեքենայից, պարզ բազկաց աշխատութեամբ։ Կը սորիցընէ թէ ինչ ընտրողութիւն պէտք է ընել երկրատէրը զանոնք գնելու միջոց, և այլ օգտակար տեղեկութիւններ կու տայ, ազդարարութիւններ կ'ընէ, և այլն։

Գրքին առաջին մասը հերկող գործիքներու վրայ կը խօսի, և նախ կը նկարագրէ հին և նոր գութան գործիքն. բազմատեսակ նոր գութաններէն ամենագործածականին՝ իւրաքանչիւր մասերը առանձին առանձին կը նկարագրէ, և պատկերներն ալ գրած ըլլալով ընթերցողը որոշ գաղափար կը ստանայ։ Նորաձև գութանի պատկեր մը որոշ որոշ կը ցուցնեն իրեն ձեկը, խփը, թեք, առամը, թուրը, ղեկը, մածը, կշիռը, վերնախփը, առաջնաքարը մասը, և այլն։ Ապա կը բացատրէ այս իւրաքանչիւր մասանց յատկութիւնները, տեսակները, գործելու կերպը՝ միշտ իրենց պատկերները ներկայացընելով։

Դարձեալ՝ բացատրած և նկարած է բազմախփ գութանները, երկթեան գութանը, չուրը կամ արօրը։ Ապա կը սորվցընէ վարելու կերպը, օժանդակ գործիքներու յատկութիւնները՝ որոնք են՝ ներքնալար, բազմախփ արօր, տափան, հարթիչ գործիք, և այլն։ Պէտք է աւելցընել որ տեղտեղ ալ մանր գրքով ամնօգտակար ծանօթութիւններ կու տայ երկրագործին։

Գրքին Ա. մասը կը վերջացընէ ամփոփումով մը, յորում կ'ըսէ թէ երկրագործական գործիքները բազմաթիւ և բազմատեսակ են, «Բայց մեր գործը իբրև նորութիւն, իբրև փորձ առաջնորդելու հայ երկրագործին և գիւղացուն սահմանափակում ենք ամենաամենաթեւեղներով . . .»։ Կը յորդորէ որ ձգեն երկիր գործելու հին եղանակը, և նոր կերպին հետեւին՝ կատարելագործեալ գործիքներով՝ առանց վախնալու առնոց առեւտրայթ թանգութենէ, որպիսեւեւ, կ'ըսէ, կարձ միջոցաւ պրանք իրանց գիւր մեծ տոկոսով յետ կ'վերադարձընեն . . .

Երկրորդ մասը կը խօսի ցանոց, հնձող,

կասող և քամող մեքենաներու վրայ: Յանող մեքենաները ընտիր կերպով բացատրուած են և պատկերները որոշ կը բացատրեն հեղինակին միտքը:

Փոցխի մեքենան յիրաւի շատ շահաւոր պիտի ըլլայ երկրագործին՝ ինչպէս կը պատճառաբանէ Պ. Լիսն՝ յայտնելով թէ սոյն մեքենայով 200—250 մարդու տեսնելիք գործը մէկ մարդ 6—7 օրուան մէջ ամենայն խնամքով և ջիշ ծախքով պիտի ընէ: Իսկ կասեցու և քամուող մեքենայից մասին՝ անտարակոյս հայ մշակներուն օգտաշատ պիտի երեխն, յարգող հեղինակին տուած մանրամասն տեղեկութիւնք և ազգարարութիւնքը զօրս գրած է սոյն մեքենաները գործածելու կերպին վրայ:

Յետոյ կու գայ օժանդակ մեքենաներու մասը և կը խօսի ոյժկալներու վրայ, որոնք գեղատեսիլ տեսական գործիքները շարժման ենթարկող մեքենաներ են: Կը բացատրէ մի առ մի ձիւ և ընտանի կենդանեաց, ջրոյ, շոգոյ, քամիի ոյժկալները և անոնց տեսակները, և այլն:

Երրորդ մասը որ 30 թուղթէ աւելի է՝ երկու յաւելուածք են նախորդ մասանց: Ա. կը բացատրէ և ուստ տէրութեան կանոնները կը զնէ՝ թէ ինչ պէտք են ընել մուրակով և փոխառութեամբ երկրագործական մեքենաներ և գործիչներ ձեռք բերել ցանկացողները: Բ. շատ մը երկրագործական մեքենայից և գործիչներու ցուցակը և պատկերները գրած է՝ անոնց շահագոյնները, գիները, յատկութիւնները և նշանադրոշմը մասնաւոր ընելով: Իսկ զրբին վերջերը գրած է յիշած գործիքները ծախող գործատանց հասցիները, և այլն:

Չորրորդ մասով գալով՝ որ բացատրական բառարանն անունը կը կրէ գնահատելի և օգտակար նորութիւն մ'է, փոքր գրեթով և գոյտրիկ պատկերներով զարդարուած և միայն 10 թուղթէ կազմուած: Ասոր մէջ Պ. հեղինակը երկասիրութեան մէջ բովանդակուած ուսումնական բառերու հայերէն բացատրութիւնը, ուսուերէն և գաղղիերէն նշանակութիւնները գրած է:

Բազմապէս կը շնորհաւորէ Պ. Խան—Ա.

զեանի ներկայ ընտիր մատեանը և կը մաղթէ ձեռնարկել ուրիշ սոյն օրինակ ազգագետ երկարսիրութիւններ: Հ. Ն. ՏՐԱՅՈՒՆԱՆ

3. Մօլիէր. Կեղծ Ագնեսանիք. (Les Précieuses Ridicules). քարգմանեց Մե. իք Յ. Պիլիքձեան: — Բագոռ, տպարան «Արար». 1889, 8^o, 55 էջ. Գին՝ 40 կոպ.

Թրքահայ թարգմանիչը ուզեր է միջին ճամբայ մը բռնել արեւելեան և արեւմտեան լեզուաց մէջ. յորդորուած գուցէ այդ լեզուները խօսողներուն իրարու մերձեցալու յօժարութեան: Փափաքը լաւ է, այլ թէ յաշոգած է կատարելապէս. մեքի կը թուի թէ ոչ. բայց պէտք չենք մոռնալ՝ որ եղածը փորձ մըն է, և փորձ մը սրչափ ալ թերի ըլլայ ի սկզբան՝ գովութենէ զուրկ չէ, քանի որ բարի փափաքով մ'եղած է. և որ նոյն իսկ կրնայ յոյս տալ, որ՝ ապագային՝ եթէ նմանօրինակ փորձեր ըլլոյին երկու կողմանէ, մերձեանն արեւելք և արեւմուտք, առանց զիրար ի սպառ եղձանելու:

Միակ աննրերին թարգմանութեան մէջ՝ տառասխալներն են, որ կը տեսնուին. ուրոցմէ ահա՝ օրինակի համար՝ քանի մը հատ. (էջ 6) Հառակնոքիւն, (էջ 7) Բնեղ (գնեղ). (էջ 16) Հօրանելի, (էջ 44) Կտրիչ (կտրիճ). (էջ 54) շուղակահար, ստեղծ: Կան նաեւ ջիշ շատ օտար բառեր. (էջ 25) փիլիսոփոքիւն, ունէինք փիլիսոփայոքիւն, խմաստախրոքիւն: Ենտի սխալ գործածութիւնք. (էջ 19) միթէ ես չի պատռախրեցի... (էջ 22) Ինչպիսի (ինչպիսիք), որքան (նրքան), Ինչքան (ինչքան), Ինչպիսի (ինչպէս), սոյն բառը մերթ ուղիղ ալ շեշտուած (էջ 23). (էջ 25) արդէօք, և այլն: Տպագրական սխալներն ալ ջիշ չեն՝ հակառակ գրբին փոքրկութեան: Հ. Ա. Ղ.

4. Վերնէր Զօմարտ. — Սոցիալիզմը և սոցիալական շարժումը 19րդ դարում. Հ. Յ. Դ. տպարան. 1898. հրատարակութիւն Ժրնէվի Հայ ուսանողների: — Հարիւրէն բեքտասան էջեր բաղկացեալ տետր մ'է թարգմանուած ի գերմաներէն, որոյ վրայ խօսելու ենք կրկին տեսակետով, նախ՝ իբրեւ


թարգմանոցիս, երկրորդ՝ իբրև հեղինակոցիս:

Ա. Իբրև թարգմանութիւն յիւրաքանչիւրէն, որ թարգմանիչն այսպիսի սեղմ ոճով գրուածոյ մը իւրաքանչիւր իմաստները լաւ ըմբռնելու է, սակայն կաշկանդաւած թարգմանութիւն մ'ըլլալով նիւթին գոտարութիւնը կրկնապատկեր է, մինչդեռ այսպիսի քաջ գերմանացի մը կրնար և հարկ չլ'ը որ ազատ թարգմանէր, տեսերին լուրջ և գոտարին իմաստները զիւրըմբռնելի ընկելու համար: — Ինքն իսկ թարգմանիչը կը խոստովանի՝ թէ «Օտարաբանութիւններ շատ կան», և կը յաւելու. «Անխուսափելի չարք»։ Մեզի կ'ենք ի՞նչ թէ այս մասը՝ թարգմանութեան ամէն կէտերուն մէջ արգարանալի չէ, զոր քերականներու թողլով, տեսնենք այս տեսորը:

Բ. Իբրև հեղինակութիւն, զոր Վ. Զօմբարտ նախ խօսեր է ճառօրէն, ապա կարգաւորելով հրատարակել է: Նա՝ իւր յառաջբառնին մէջ կը գրէ. «Մի սեղմ, խիստ գծաւորուած և ամբողջական համաձայնացք է սօցիոլոգիայի և սօցիալական շարժման 19րդ դարու»։ — Տեսարու ըստ նիւթին և հեղինակութեան քննադատուելու համար ստուար մատենի մը կարօտ է. բայց մենք անձուկ տեղւոյն մէջ դիտել կու տանք միայն, որ այդ տեսարն, ինչպէս կը ցուցնեն բացայայտ վերոյիշեալ տողերն, արդի դարուս գոտարակնին խնդրոյ մը պատմական պատկերն է, յորում ի մէջ կը բերուին ընկերվարական բաղձալի գրութիւններ, հռչակաւոր անձանք խորիմաստ գիւտեր՝ ընկերական ազնւոցը գոնէ մեկմեկու համար: Հեղինակն կը թուէ մարդկութեան թշուառութիւնները՝ որք յայտ կրնան ամփոփուիլ. Ուսանք ի զրկանս կը մշին, այլք՝ ի գրգանս կը յոփանան: Սակայն ոչ կարելի Մաքս և ոչ իրեն նմանիք կրնան այսպիսի հակադրութեան մը զարման ընել. և եթէ ըլլայ հնարաւոր սպեղանի մը այսքան վերաց մարդկութեան՝ անշուշտ դարուս ամենէն գերազանց գիւտն պիտի ըլլայ: Ուստի հեղինակին այդ համահայեացքը թողլով իւր առակ պատմական վիճակին մէջ, որոյ վարկը քննել տեղոյ չի ներք, Շէլլերին տողերէն աւելի, որովք նա կը կնքէ իւր

ճառախօսութիւնները, ազդոյ կը տեսնենք վերջիլիսին համառօտը, *Labor improbus vincit otium*։ Երեցընելով՝ որ կեանքը պայքար մ'է, և յաղթութիւնը մերթ ոմանց է և մերթ այլոց, և կենաց նժարքն երբեք հաւասարակշիւ չեն կրնար ըլլալ, մահաւանդ թէ՛ կենաց նժարից հաւասարակշիւութեան ժամն է աշխարհիս յետախաղացութեան վճռաժամն:

Հ. Ս. ՍԱՐ.



ՃՈՆ ԲԱՐՍԵՂ

Պատուարժան խմբագիր Բաղմավէպ հունդիսարանի:

Քաղաքական հանդիսից սուրհասուցակը կը բերէ ձեզ դարաւոր խնդիր մի լուծել և բացատրել, և առ հասարակ քանակիւրաց և պատմագիտաց և այլ հետաքրքիր և ըմբօքեցաւոր ամծամց միտքը, կարծիքը և գաղափարը ուղղելու և մշտմշտաւոր կերպիւ կասկածը փարատելու համար: — 1. Բարսեղ վարդապետ ժողովուրդէն մէկ է թէ երկու: 2. Է դարձեալ ասկած մէկը, թէ ժողովուրդը: 3. Մարկոսի անտարաճի մեկնիչ, որոյ առաջին հատորը կորսուած է, և շարականաց որդիչ՝ որք ժողովուրդը կոչեցամ ասեմ, սոյն այս Բարսեղ վարդապետն է, թէ այլ ոք: Այս կէտերը լաւ պարզելու համար արժամ կը համարիմ հեղինակաց ոմանց աւանդած խօսքերը յառաջ բերել աստուծոյ ի ղիւրթութիւն վերծանողաց:

Հ. Միքայէլ Զամեան, պատմաբան կոչեցեալ, Բարսեղ վարդապետի մասին իւր պատմութեան մէջ գրէ այսպէս. «Յետ այսոյ կանոնադրութեան և յետ արձակելոյ ժողովոյն, Ներսէս շինող կաթողիկոս յամծմ արար Բարսեղ վարդապետի, որ էր առաջնորդ Դպրեմանից յերկրին Շիրակայ, որոշումն առնել շարականաց, ըմտնելով զպիտանմի յամպիտանեաց. և մա արար այնպէս: Այս Բարսեղ վարդապետ երեւելի էր յայմժամ ի Հայս, և կոչիւր իբր մակամուսնի ժողով, որ և արար ըմտիւր գրուածս, ընդ որս և զմեկմեկութիւն անտարաճիմ Մար-